

ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ Նունե Մովսիսյանը ելույթը „Երգը բարեկամության կամուրջ է,, ռուսական երգի փառատոնի մարզային փուլի ժամանակ

Ողջունում եմ „Երգը բարեկամության կամուրջ է,, մարզային փառատոնի 49 մասնակցին, ժյուրիի անդամներին:

Հայ-ռուսական բարեկամության հիանալի կամուրջ է երգը, որը հնարավորություն է տալիս երեխաներին՝ հաղորդակցվել ռուսերենին նոտաների նվագակցությամբ:

Շնորհակալություն եմ հայտնում փառատոնի կազմակերպման համար Ռուսահայերի միության նախագահ Արա Աբրահամյանին, նրա տեղակալ Վլադիմիր Աղայանին, ովքեր իրենց ներդրումներն ունեն այս գործում:

Այսօր 6 ժանրում՝ ռուսական ժողովրդական, ռուսական մանկական, էստրադային, ռուսական ռոմանս, ռուսական հայրենասիրական, հայկական երգ ռուսերենով, ելույթ ունեցողներից 5 երեխա իրավունք կստանա մարզը ներկայացնել հանրապետական փուլին:

Արագածոտնի մարզպետ Գաբրիել Գյոզալյանը խրախուսական պարգև է սահմանել հանրապետական փուլ անցնող աշակերտների համար:

Հաջողություն եմ մաղթում բոլոր մասնակիցներին: Թող բարեկամությունը միշտ կամուրջներ կապի թե՛ երգի, թե՛ կյանքի բոլոր բնագավառներում: